



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**ՈՒՂԵՐԶ**

Հայաստանի Հանրապետության հայարտ քաղաքացիներ, դպրոցականներ, մանկավարժներ, ծնողներ և առաջին անգամ դպրոց ուղք դնող մեր շատ սիրելի փոքրիկ առաջին դասարանցիներ, շնորհավորում եմ Ձեզ և բոլորիս գիտելիքի, դպրության օրվա առթիվ:

Գիտելիքը և կրթությունը անգնահատելի արժեքներ են: Այդ արժեքների նկատմամբ հավատն ու խոր ակնածանքն արմատացած է մեր ազգային մտածելակերպում: Նոր ուսումնական տարին կրկին անգամ ընդգծում է այդ արժեքների կարևորությունը ազգապահպանության և մեր ազգի հարատևության գործում, այն ավետում է նոր արժեքների, նոր իմացության և նոր գաղափարների մեկնարկ: Լիահույս ենք, որ մեր նվիրյալ ուսուցիչների և ծնողների ջանքերով կարողանալու ենք կրթել ավելի բանիմաց, առողջ ու արժանապատիվ սերունդ:

Հարգարժան ուսուցիչներ, ինչպես նշել է Վ. Հյուգոն՝ գալիքը դպրոցի ուսուցչի ձեռքերում է: Մեր վաղվա օրը կերտող այսօրվա սերունդը վստահված է Ձեզ: Ավելի բարեխղճորեն և երկյուղածությամբ լծվեք հանրակրթության գործին, քանզի հանրակրթությունն այն միակ ճանապարհն է, որով անցնում է յուրաքանչյուր քաղաքացի: Հիշե՛ք, Ձեզ է վստահված հասարակությանը նոր որակ ապահովելու շնորհակալ գործը: Ուսուցիչ լինելը կոչում է, ոչ թե՛ աշխատանք:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի մեր բոլոր դպրոցականներին:

Հարգանքով՝  
Հրազդան համայնքի ղեկավարի  
պաշտոնակատար՝

Լ.ՍՏԵՓԱՆՅԱՆ